

տանում և որոնք չէին տանջում ձեր հոգին: Ո՛վ շիտակ մեղաւոր, զննիր կեանքդ Աստուծոյ սրբութեան լուսով: Կշտիր քո գործերդ ու մտածմունքներդ և էլի մի անգամ ասան եթէ կհամարձակես, այդ մեղաւորի առաջ, որին Աստուած պարգևեց շնորհք, ասան եթէ կհամարձակես, թէ եղու այդ մարդուց աւելի լաւ ես: Իսկ մենք բոս Փրկչին դարձող աւագակին կասենք, որ մեզ հարկաւոր է Մորա արդարացումն: Մորա կատարեալ թողութիւնը: Միայն Մորա մէջն է մեր խաղաղութիւնն ու յոյսը:

«Այսօր ընդ իս իցես ի զրախտին»: Եղբայր, զրիստոս աւագակի առաջ զրախտը բաց արաւ բայց և այնպէս չազատեց նրան չարչարանքից ու մահից խաչի վերայ: Մա չէ թեթեւցնում նորա ներկայ չարչարանքները, չէ մեղմում նորա մահուան տագնապը:

Ընդունեցէք այս վերջին դասն ու խրատը, ով եղբայր, որոց Աստուած հրաւիրում է չարչարանաց համար: Զեր վշտերը յաճախ վրդովեւ են ձեր հոգին, յաճախ ծածկել են ձեզ նից Աստուծոյ բարութիւնը: Ի՞նչպէս կարող կլինէիք հաւատալ, թէ Մա ձեզ սիրում է, երբ Մա բոս երեւութի ձեզ ձեր բազմին էր թողած, երբ ոչ արտաքին թեթեւութիւն չէր վիպում Մորա նախախնամութեան, երբ զուք էլ այլոց նման պարտաւոր էիք Մորա տեսանելի խստութեան դառն բաժակը դադարկել: Աւագակը փրկուած է, բայց և այնպէս նա չարչարուում է: Մորա առաջ բաց է զրախտը, բայց նա էլի մնում է բւեռած խաչի վերայ: Մորա առաջ բաց է յաւիտենականութիւնը, բայց նորա մահուան պատիժը չարունակութեամ է: Այո՛, նա չարչարուում է, որովհետեւ Տէրը նրան չխոստացաւ երկրաւոր երջանկութիւն, չխոստացաւ ազատութիւն երկրաւոր տանջանքներից, նա չարչարուում է, կարծես թէ Աստուած չէր սիրում նրան: Բայց մտածում էք արդեօք, նա հօ իւր Փրկչի հետ միասին է չարչարուում...: Ո՛հ երջանիկ չարչարանք, ով կցանկանայ նրանցից հրաժարուելու: Մա չարչարուում է, բայց նորա մահատիւ պէքերը

տեսնում են Մրան, ով իրան զոհ բերեց նորա փրկութեան համար: Մա գնում է թագաւորելու Մորա հետ միասին, մի՞թէ այդ շատ և շատ բաւական չէ Մորա հետ միասին չարչարուել ցանկանալու համար: Մի՞թէ զորա համար շատ բաւական չէ Մորա չարչարանաց վկայ լինելը, Մորա հետ միասին լինելը ընդհանուր նախատանքի, հայհոյանքի և Մորա միայնութեան միջոցին: Ահա՛ եղբայր, ճշմարիտ քրիստոնէի չարչարանքները, ահա սա է բացատրում ձեզ այն ուրախութեան եռանդն ու ջերմ ազօթքներն, որոնք դուք տեսաք ծանր կեանքի և ամենադառն վշտերի ժամանակ: Այսօր Ինձ հետ խաչի վերայ, այսօր էլ Ինձ հետ զրախտում ու փառաց մէջ ես — բայց թէ Խաչի վերայ և թէ փառքում, եղբայր, Մորա հետ լինենք, միշտ Մորա հետ:

(ԲԵՐՍԻԷ)

ՊԱՏՄԱԿԱՆ

Խ Ճ Ո Ւ Ղ Ի

(Շարունակութիւն) *



ազրն անդայ երկրորդ արքունական նոր խճուղին է իրանայ ճանապարհն, որ Տրապիզոնից կարի՛ն կարնից Բասնի միջով կանցնի Տէլի — Բաքա գիւղի 1/2 ժամ հարաւից, կը մտնէ Գարա — Տերպէնտ (ՍԵ — Կիրճ) կոչուած նեղ և երկու կողմից ժայռերով ու զահայեաց չափազանց բարձրացած սորտափ ազդող կիրճն, 1 3 1/2 ժամու չափ խոր կրճի մէջ Եշեկից իջնող ձորակի հետ բարձրանալով

*) Տէս նախընթաց համարը:

1. Այս կիրճն երկու խոր ձորակներու կը բաժանուի. երկու ձորակներն Գարաեղբայրների մօտ իրար կը միանան. ձախ կողմից իջնող ձորն Ղըզլ Տերպէնտ կասուի:

Խալեաղի լեռնագաշտն, որ ընդարձակ տա-
րածութիւն մի բռնած է Բագրեւանդայ դաշտի
արեւմտեան բարձրալանդակին վերայ, տակաւ
առ տակաւ բարձրացանք Վահար քրդաբնակ
գիւղն, որ Խալեաղի հիւսիսային կողմն խը-
ճուղոյն վերայ գտնուած առաջին գիւղն է,
որ Ալաշկերտի վիճակին կը պատկանի և կայ
Գոամ լեռներու ստորոտն:

Մեր ճանապարհն Գարատերղէնայի մինչև
Գահար 6-7 ժամ արեւելեան հարաւային ուղ-
ղութեամբ էր, նոյն ուղղութեամբ Գոամ լեռ-
ներու հարաւային կողերն 3 ժամ քերելով
Խաւուրմի ջրի հետ իջանք Քիւրդ-Ալի քրդա-
բնակ գիւղն, աստի ևս խճուղոյ հետ մեր ու-
ղին շարունակեցինք ¹/₂ ժամ ի հարաւ, ճա-
նապարհից դուրս դէպի աջ թողալով Խալեաղի
վերջին Աբուղէթ գիւղն, խոնարհեցանք ²/₂
ժամու չափ, իջանք Ալաշկերտի դաշտի ա-
ռաջին գիւղն Զեռլիան՝ մեր աջն թողած լի-
նելով Տանձուճկներու բարձրութիւնը և ձա-
խը կռուիս ¹ լեռներու կողերն, արեւելեան
հարաւային ուղղութեամբ իջանք:

Ճանապարհը Զեռլիան գիւղի մէջ երկուքի
կը բաժանուի, բռն խճուղին դաշտի միջով
նոյն ուղղութեամբ կանցնի խոշեան, Մսուրի
գիւղերու միջով, կուղլուի Շեռեանի ձախ
ափի վերայ գտնուած Զըլիանի (քառասուն
աղբիւր) հայ գիւղն ձախ թևի վերայ թողալով
Մօլլա-Սիւլէյման հայ գիւղի, Մսուրիի և
Շամեանայ քաւաշներ, նա և Աջի վերայ թող-
ալով Շեռեանայ գլուխն, խոշեան, խասուուր,
կարսան, Գաւոյ, և ... գիւղօրէից քաւաշնե-
րը, Զլիանի գիւղից յարեւելս ուղղուեցաւ
ճանապարհն Շեռեան գետոյն ձախ ափի մեր-
ձականերից, անցաւ Ղազի, Մօլլա Օղման,
Բօշիկ և Գամգլիան գիւղերու մօտէն, մինչև
Գամգլիան ³/₂ ժամ երկարելէ յետոյ, դար-
ձաւ արեւելեան հիւսիս, մի ժամից ևս Գա-
րաբիլիսէի հարաւային եզրն հասաւ:

Զեռլիան գիւղից մինչև Գարաբիլիսէ ար-
քունական խճուղին է, որ կարաւանը կեր-

թեւեկէ, ուղիղ ճանապարհն է որ կանցնի
դաշտիս հարաւային եզրից, իսկ կայ մի այլ
ճանապարհ ևս որ Զեռլիանից կը բաժանուի
յարեւելս, կանցնի Մօլլա-Սիւլէյման գիւղից,
կը մտնէ Թօփրագ-գալէ (Վաղարշապետ)
ուր կը նստի Ալաշկերտի կառավարիչը (գալ-
մագամ), ուստի կը դառնայ արեւելեան հա-
րաւ, դաշտի միջով կը պատահի Ղալաբէկ,
Խրիցու, Քարձոր, Հիզան գիւղօրէից, կը մըտ-
նէ Գարաբիլիսէ և կը խառնուի խճուղոյն:

Երրորդ ճանապարհն ևս դաշտիս հիւսի-
սային եզրէն կանցնի, Զեռլիան, Մօլլա-Սիւ-
լէյման, Վաղարշապետ, Խաչու, Ամաս, Աշ-
խալի, Երանոս հայ գիւղերու միջէն, կը գառ-
նայ ի հարաւ, կը մտնէ Գարաբիլիսէ:

Մեր ճանապարհը Զըլիանի գիւղից մինչև
Գամգլիան Շեռեանայ ձախ ափն ի վայր էր,
Գամգլիանից մինչև Գարաբիլիսէ Քօր գետի
աջ ափն ի վեր է, այժմ մենք անցանք Քօր
գետից, մեր ճանապարհն ուղղուեցաւ արեւ-
ելեան հարաւ, տակաւ առ տակաւ մօտեցաւ
Մուրատի աջ ափին, անցաւ Եօնճալու, Ղա-
զի գիւղերու միջից՝ Զիրոյ և Էքմալ գիւղե-
րու հարաւից, բռնեց Մուրատի աջ ափը,
Զրիվեր ըստ ջրի բացած ընթացքին ոլոր մա-
լոր մինչև ներքին Գաշլիսայ պարսկաբնակ
գիւղն, ջրի հանդէպ թողուցինք Սօֆեան,
Կեառեկառ (Խ-Է), Կօլասոր պարսկաբնակ
գիւղերը ձախ կողմերնիս Սինակ լեռներու
կողերու ստորոտներն և տասնի չափ քրդա-
բնակ գիւղեր:

Գարաբիլիսէից մինչև Գաշլիսայ 5 ժամու
չափ կը տեւէ ճանապարհն:

Խճուղին Գաշլի չայից յարեւելս կը բորձ-
րանայ, տակաւ առ տակաւ Մուրատից կը հե-
ռանայ, մէկ ժամ հեռաւորութեան աջ կող-
մը կը թողու Ալիկոռ պարսկաբնակ գիւղն
և դարձեալ տակաւ առ տակաւ Նպատայ հիւ-
սիսային ստորոտը գտնուած կամուրջին ¹ կը
մօտենայ, կամուրջը աջ կողմ թողալով երեք
ժամ ևս Զիրաւայ դաշտից անցնելով Դիա-

1. Երկու կողիսներ կան, միւսն մերձ է Բօզթէ-
փէ լեռան:

1. Այս կամուրջը միայն վանքի համար շինուած է:

տին կը հասնի ուստից յարեւելս ուղղուելով խիսեկայ կեսուկով Պայազիս կուղղուի կանցնի Պարսկաստան:

Վ Ա Ն Օ Ր Ա Յ Ք:

Բաղրեանդ ի նախնեաց ունեցած է բազմաթիւ վանքեր, որպէս բերդերն դաշտային մասին մէջ չեն տեսնուիր նաեւ վանքերու հետքեր ևս այլ բարձր վայրեր լեռներու գագաթներու վերայ, գեղեցկագիր հովիտներու մէջ գեւ կը տեսնուին շէն և աւեր սրբավայրեր, որոց իւրաքանչիւրը ունի իւր հիանալի տեսարանն, որ մութատատուր սրբի հետ ջերմեւանդ ուխտաւորին հոգի և կեանք կը ներշնչէ, որոյ նեղ հորիզոնը կընդլայնէ:

Բաղրեանդ միշտ պատերազմներու ասպարէզ դարձած և այս երկիրը հրոսակային խմբերու արշաւանաց ճանապարհի վերան գտնուելով ժողովուրդն ստիպուած է միշտ տեղափոխուիլ յայլուր գաղթել կամ խոյս տալ, որով թողած է իւր սիրած շէն և հսկայ եկեղեցիներն ու վանքերը և հեռացած: Նորեկ ժողովուրդն շատ անգամ հեռի գտնուելով այս հրաշալի սրբավայրերէն ըստ արժանւոյն չէ կարողացած հսկել որոյ վերայ, որով տակաւ առ տակաւ ուխտազնացութիւնը գաղաւթած՝ որ ըստ օրէ քայքայման վիճակի հասած են այս նոյն հոյակապ վանօրայք որք ժամանակին պարծանք էին հոյ ժողովրդեան:

Այն բազմաթիւ վանքերն որք ժամանակ մի շէն էին, որոց իւրաքանչիւրն ունէր իւր միաբանութիւնը և զպրօքը, իւրաքանչիւրի շուրջը կենդանութիւն և կեանք կայր, ուստի ջերմեւանդութեան հուրը ամեն կողմ կը սփռուէր, ամեն կողմէ ծերք և երիտաք, կանայք և հարսուք, երիտասարդք և օրիորդք կարաւանի նման խումբ խումբ շարուած ուխտի կգային, որոց իւրաքանչիւրը շինութեան մի յիշատակ կաւերացներ իւր սիրած սրբին, ու կը մեկնէր գոհ սրբտօվ լի հաւատով իւր խաչաքն առած, բայց աւագ ըիւր աւագ, այս օր այդ վանքե-

րու մեծամասնութեան շուրջն ամպութիւնը պատած է: Հայկական մի շուրջ չքուիր, ուխտաւորներու աղօթքի փոխան վայրի կենդանիք որջացած են մէջը, ամանք ևս ոչխարաց դոմ՝ դարձած, այս բաւ չէ, ուխտաւորներու նման կարգ կարգ ժողովուրդ բաժ և բրիչ յուսն, գէպի վանք կը մերձենան, գուկը կարծես թէ ջերմեւանդ ուխտաւորներ են զօքայ բայց կը սխալուիս, զօքա փոխանակ սրբայրի սրմերը համբուրելու, յարգանք մատուցանելու, բիչի հորուածներ կտան այն սրմին, որ մեծ աշխատանքով և քրտամբ կանգնած էր:

Այս նորաձեւ ուխտաւորներուն մին տեսար որ մեծ ճգամը տապալեց մի կարմիր սրբատաշ քար, ուրիշը գեղին, միւսն սպիտակ, մի այլն գորշ, մէկն ևս մի նոյնաւոր քար, որ ամեն մէկին վերայ վարդեան մի ամիս աշխատանք թափած էր, ուշք և միտք հոգնեցուցած:

Ջեռեղեցին այդ թանկագին քարերն սոյլերու վերան և կարծես քուրդն այդ քարը մի յարմար շինութեան մէջ պիտի գետեղէ, — ոչ, քուրդն ինչ գիտէ, զօրս արժէքն, նա պիտի գետեղէ այնպիսի վայր ուր հորի էր կոշտ փայտ մի, նա շինած է շէմք կամ գոնդի և կամ մուրի առջև յարմարեցած է:

Գիտէք արդեօք այդ քարերու վերայ քանի քանի գրուած յիշատակարաններ խառնուած են աղբանոց, քանի քանի բարերար անձինք, որք արժանի էին պատմութեան առջև հսկայարար և պարծանօք երեւան գալ, բայց աւագ ըիւր աւագ, որ այսօր փոշիներու հաւատարած, մոռացութեան մոռնուած են, գեւ նորա կմախքները կը ցնծան թէ իւր յիշատակը ժողովրդեան առջև կանգնած է փառապանծ:

Ահա այս տեղ կը ներկայացնեմ այս տեսակ վանքերու հետ մի քանի շէն վանքերու համաօտ ցուցակն:

1. Խարանանայ Ա. Բովհաննու վանքը որ Պաճօի կեսուկին հարաւային երեսին վերայ

կը գտնուի մերձ Խնուսայ և Մանազկերտի սահմանին, Խնուսայիներէ, Մանազկերտայիներէ, Անդադիներէ և Բազրեանդիներէ յարգուած սրբաւայրոյ որ հսկայ շինութիւն մէր սեւ կարմիր սպիտակ գորշ և կապոյտ քարերով հիւստած, քարերն զեղեցիկ կախանդներով զարդարած, մի աւուր ճանապարհ հեռուն քրմեանդ ուխտաւորին աչքին կանէր նորա հսկայ շինութիւնը, որտառով միմանջ մի կը հանէր իւր շրմնէրէն երեսն խաչակնքերով ուրախ զուարթ առաջ կը գնար իւր քրմ հաւատքով անմիջական օգնութիւն առած լինելով Ս. Յովհաննիսէն և իւր հոգնած ծնիներն զբութիւն նաեւ գտած:

Այսպիսի վանք մի որ 35—40 տարիներէ ի վեր անտէր լծողուած և Անդադի գաւառակին պատկանելուն և լեռնային մի վայր լինելով նաեւ այս գաւառակին մէջ ևս հայի նշոյն անգամ չգտնուելով անխնամ մնացած է և գրեթէ շարունակ Արաբականց ցեղին պատկանող Թոռուն կոչուած քուրդ ցեղապետներուն հսկողութեան ձեռք մնացած էր որք այս հիւանդի շինութեանց վերայ պարտաւորուած էին հսկել մինչև 1880—81 թուականը: Այս թուականին կարօց կոչուից գաղմտղ Թերեքեմէ թուրքեր կակսն քանդել Թոռուններն կը զխնդրեն, թուրքեր պաշտպանութիւն գտնելով կը քանդեն:

Քանդելու միջոցին խորանի տակից մի գուռ կը բացուի, ներքեւ ժայռին մէջ կոխուած 30—40 սենեակ կը յայտնուի, ամբողջ սենեակներու մէջ յարեւից ժայռի միջէն բացուած մի լուսամտէ լոյս կիմախանէր:

Այս հիւանդի վանքը չորս ժամ հեռուից տեսած եմ իսկ մօտից տեսնող զիւրացիք հիւստիւստիւստ կը պատմեն:

«Պօղանուայ մէջի մէջ, Անի քաղաքին մէջ տեսած էնք (էի) շատ վանքեր, բնակ գործէսի գործ, իսկի խորածանայ վանքի խորտակութեն տեղ չգտնուիր, լեզու պէտք ա թարիք էնայ (մանրակրկիտ նկարէ), խելքից մարից դուրս ածող ածայից (չափազանց հիւանդի) բան մայր:

2. Տէրիքոյ Ս. Աստուածածին, որ կը գտնուի Ղլիճ կեսուկի հարաւային կողերուն վերայ, սա չունի խչրիխայի վանքի հսկայ շինութիւնը, բայց ճարտարապետական բնութիւնը հիւստածք ունի, վանքն այս օր կանգուն է, ոչնարաց գոմ գարձած, 1877 թուականներուն այս տեղ կողիք կը բնակէին նաեւ միարանութիւն հաստատուած էր ունէր կառուած, պատերազմի միջոցին միարանութիւնը խոյս տուց, 1881—82 թուականներուն ևս կողիք գաղմեցին ուստական հոգր, որով վանքս մնաց տերակ: Սորա համար կը պատմեն թէ Ղլենեակոյ Մխիթարեան վարդապետ մի եկած կաթուղիկէի մէջ գտնուած պահարանի տեղն գտած մեծ հնութիւններ առած տարած է այս 35—40 տարուան միջոցին:

3. Ոսկեանք. — Այս սրբաւայրն որպէս կը պատմեն 1830—40 թուականներուն առաջին ուխտավայրն էր, կը գտնուէր Բազրեան գոյ յարեւր Ղիառինայ ի հարաւ, Ծաղկանց լեռներու մէջ, որ այս օր այդ կողմերն հայ բնակութիւն չլինելով ուխտադնացութիւնը զարդարած է, միայն այդ սրբաւայրի մօտից անցնող ճանապարհորդն աւաղակաց երկիւղից հազիւ հազ մի խաչ կհանէ երեսն, արագ քայլերով կհեռանայ:

4. Սուրխանք. — Սուրխանքն սրբաւայրն որպէս գիտենք, կը գտնուի փոքր Սուկաւէտի կողերուն վերայ, ուխտադնացութիւնը կը շարունակուի շնորհիւ ստորտան գանձուած քանի հայ զիւրացոյ, մանաւանդ աւելի մօտն գտնուած Մօլլա Սիւլէյման գիւղի որոյ մեծ մասն հայ հօռվմական են, որոց վարդապետներն ամբան գրեթէ ամեն կիրակէ անգ պատարագ կը մատուցանեն, որոց մատուցին կից այլ մատուցի մի մէջ ևս հայեր պատարագ կը մատուցանէին 1877 թուականէ առաջ:

Վարդապետի և Ս. Գէորգոյ տանին մեծ բաղմութիւն կը լինի գաշախա ամեն զիւղերէն խումր խումր հայեր կը հաւարուին:

5. Բազումի (Խչ-քիլիսայ) Ս. Յովհաննիս վանքն. — Այս հսկանուոր և հսկայ շինու-

Թիւնը կայ Նպատ լերան հիւսիսային սառ-
րոտը: Մօրատ գետոյն ձախ ափին վերայ,
Չիրաւայ գաւառի արեւմտեան կողմն, ունի
միտարանութիւնս վանահայր եպիսկոպոս և
ընդարձակ կալուածներ, որոց ծայրն մինչև
Գալլատոյ ծովակն կը հասնի:

Այս շէն և հիւրասէր վանքը գրեթէ յե-
նարան մի էր Բագրեւանդայ ժողովրդեան հա-
մար մանաւանդ իւր շուրջը գտնուած 4—5
գիւղացւոց համար: սակայն այս երկու տար-
ուան մէջ տեսնելով որ վանքն ևս նեղ գրու-
թեան մասնուած է, ժողովուրդը լքուած
աչք տնկած է գաղթականութեան:

Այս վանքը տեղ տեղ սկսուած է քանդ-
ուիլ, նորոգելու անհրաժեշտ պէտք ունի:
1896 թ. առաւորայ Ս. Աստուածածին. — Սա
այժմ եկեղեցի է խոստուր գիւղի և վանք
Ալաշկերտի գաւառի հայ ժողովրդեան համար,
որպէս գիտենք, կը գտնուի արեւմտեան գաւ-
առի արեւմտեան կողմն:

Ախտաղանցութիւնը Ս. Աստուածածնի և
Ս. Գեորգայ տօնին կը լինի:

Գիւղիս հիւսիսն քիչ բարձր գիրքի մի վե-
րայ կառուցուած է վանքս, սորա կաթու-
ղիկէն քանդուած է, որմերն ցոյց կտան, որ
հիւանդի շինութիւն մը ունէր: քանի յիշա-
տակարաններէց կերևի, որ Շինող հայրապե-
տի ձեռքը շինուած լինելու է, նաև պատ-
մութիւնն ևս յիշատակարանի թուականին
տպացոյց մէ: «Եւ շինեաց սա և եկեղեցի
Սուրբ Աստուածածնի ի վարդապետ և
վանն այսոյիս բաղում շինութեանց կոչե-
ցաւ իրր յատուկ անուամբ Ներսէս Շինող,
թէպէտ և զոր մի անգամ շինեցաւ գրեթէ
ամենայն եղծաւ ի հազարացոյց»:

Ըստ աւանդութեան վանքս երկու անգամ
հրդէհի մատնուած է, մին Ննկթեմուրի մի-
ջոցին, երկրորդն մօտ ժամանակներս, եկե-
ղեցւոյս ներքին շինութիւններն և յիշատա-
կարաններն ևս ցոյց կտան, որ երեք անգամ
նորոգուած է:

Եկեղեցւոյս հարստային կողմ բացուած զը-
ռան մօտ կայ մի խոշ քար կանգնած, որոյ
ստորին թևի վերայ եռանկիւնաձև կոփուած
ու մէջը արձանագրուած է. «Ի թուականու-
թեան հայոց 1886 թ. կանգնեցաւ սուրբ Նը-
շանս ի բարեխաւսութեան մարգարէից, որը
ընթեմուք, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած
զԶեզ յիշէ»:

(Սը շարունակուի):

Ս. ՀԱՅԿՈՒՆԻ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԵՍԵՆՈՅՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆՍ

ԻՎԵՐԴՕՆՈՒՄ:



(Շարունակուիլն) *.

նայելով, որ Պէստալոց-
ցին արդէն եւրոպա-
կան հռչակ էր ստա-
ցել, որ պէտք է նրան
մարդկութեան դաս-
տիարակչի տիպոսը տար՝
ընկաւ և թշուառ վախճան
ունեցաւ այն ուսումնարանը, որ նա հիմնեց
Խվերզօնում: Այդ անկման պատճառները յի-
շում է հայր Թիրարը: Ներքին պատճառները
բարդուեցին ուսուցիչների անհամաձայնու-
թեանց հետ: Այն սէրը, որ իշխում էր մեր
մէջ, ասում էր Պէստալոցցին իր աշխատակից-
ներին, անյետացել է և պէտք է անյետանար:
Մենք չը չափեցինք այն ոյժը, որ պահանջում
էր սէրը: Սարսափելի վիճարանութիւնները
ստիպեցին Պէստալոցցուն հեռանալ այդ տե-
ղից:

1825 թ. երբ նա 80 տարեկան էր՝ գնաց
Նոյհօֆ, Տիկին Պէստալոցցին, որ շարունակ
խրախուսում էր իր ամուսնուն՝ վախճանուել
էր 1814 թուին Խվերզօնում: Պէստալոցցին
ապրելով Նոյհօֆում՝ գրեց «Վարապի երգը»
և «Լմ ճակատագիրը»: Սա այդտեղ հանգըս-
տանում էր օրական 6 ժամ խի մնացած ժա-
մանակ գնում: այրուրէն էր սովորցնում Բիւ-
րի ուսումնարանում: Վերջապէս այդ պատ-
կառելի ծերունին վախճանուեց 81 տարեկան
հասակում՝ այն տիրութիւնից, որ պատճա-
ռեց նրան Բիրրի գրութիւնները: Բիրրը այդ
գրուածներում՝ յարձակում էր նրա բնաւո-
րութեան, կրօնական զգացմանց և մանկավար-
ժական եղանակների վերայ:

* Տե՛ս. Նախընթաց համարը: